

1.2.3. Շինարարություն

Բնակարանային շինարարություն: 2000թ. հունվար-նոյեմբերին հանրապետությունում բնակչության, սեփականաշնորհումից ստացված միջոցների և մարդասիրական օգնության միջոցների հաշվին շահագործման են հանձնվել 108256 քառ.մ ընդհանուր (օգտակար) մակերեսով 379 բնակելի շենքեր կամ 1999թ. հունվար-նոյեմբերին գործարկված մակերեսի 85,0 տոկոսը, մասնավորապես.

♦ **Բնակչության միջոցների հաշվին** շահագործման են հանձնվել 80932 քառ.մ ընդհանուր (օգտակար) մակերեսով 335 նոր բնակելի շենքեր, որոնցից համապատասխանաբար. Աշտարակի տարածաշրջանում՝ 4999 և 33, Արարատի՝ 200 և 1, Արտաշատի՝ 6175 և 34, Մասիսի՝ 4250 և 35, Արմավիրի՝ 4944 և 27, Վաղարշապատի՝ 7440 և 26, Գավառի՝ 120 և 1, Մարտունի՝ 3585 և 33, Սևանի՝ 840 և 6, Կոտայքի՝ 2368 և 16, Հրազդանի՝ 1800 և 15, Նաիրիի՝ 470 և 2, Արթիկի՝ 1849 և 12, Իջևանի տարածաշրջանում՝ 520 և 4, ք.Գյումրիում՝ 864 և 6, ք.Վանաձորում՝ 1169 և 6, ք. Դիլիջանում՝ 353 և 2, ք.Երևանում՝ 38986 քառ.մ և 76 շենք:

♦ **Սեփականաշնորհումից ստացված միջոցների հաշվին** շահագործման են հանձնվել 18158 քառ.մ ընդհանուր (օգտակար) մակերեսով 10 բնակելի շենքեր, որոնցից ք. Վանաձորում՝ 1180 քառ.մ մեկ նոր բնակելի շենք և 4962 քառ.մ երկու ամրացված բնակելի շենք, Ստեփանավանի տարածաշրջանում՝ 1568 քառ. մ մեկ նոր բնակելի շենք, Գուգարքի տարածաշրջանում՝ 2680 քառ.մ մեկ ամրացված բնակելի շենք, ք. Գյումրիում՝ 1013 քառ.մ մեկ նոր բնակելի շենք և 5133 քառ.մ 3 ամրացված բնակելի շենք, Ախուրյանի տարածաշրջանում՝ 1622 քառ.մ մեկ նոր բնակելի շենք:

♦ **Մարդասիրական օգնության միջոցների հաշվին** շահագործման են հանձնվել 9166 քառ. մ ընդհանուր (օգտակար) մակերեսով 34 նոր բնակելի շենքեր, դրանից.

- «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցների հաշվին ք.Սպիտակում շահագործման են հանձնվել 1826քառ.մ ընդհանուր (օգտակար) մակերեսով 3 բնակելի շենքեր,
- Փախստականների հարցերով Նորվեգական խորհրդի միջոցների հաշվին Կոտայքի մարզի Նոր-Արտա-մետ գյուղում շահագործման են հանձնվել 1607 քառ.մ ընդհանուր (օգտակար) մակերեսով 29 բնակելի շենքեր,
- ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի միջոցների հաշվին շահագործման են հանձնվել 5733 քառ.մ ընդհանուր (օգտակար) մակերեսով 2 նոր բնակելի շենք, որոնցից Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքում՝ 1870 քառ. մ, մեկ բնակելի շենք և ք. Երևանում՝ 3863 քառ. մ, մեկ բնակելի շենք:

Հանրակրթական դպրոցների շինարարություն: 2000թ. հունվար-նոյեմբերին շահագործման են հանձնվել 5502 աշակերտական տեղով 16 հանրակրթական դպրոց, որոնցից.

♦**սեփականաշնորհումից ստացված միջոցների հաշվին** շահագործման են հանձնվել 8 հանրակրթական դպրոց՝ 2192 աշակերտական տեղով, մասնավորապես.

-*Լոռու մարզպետարանի* կողմից շահագործման են հանձնվել 7 հանրակրթական դպրոց՝ 1792 աշակերտական տեղով, դրանից՝ ք.Վանաձորում՝ տեխնիկումը վերափոխվել է հանրակրթական դպրոցի՝ 360 աշակերտական տեղով, ամրացվել է մեկ հանրակրթական դպրոց՝ 392 աշակերտական տեղով, շահագործման է հանձնվել նոր մեկ հանրակրթական դպրոց՝ 384 աշակերտական տեղով, Գուգարքի տարածաշրջանում շահագործման է հանձնվել մեկ նոր հանրակրթական դպրոց՝ 192 աշակերտական տեղով, ք.Ստեփանավանում՝ շահագործման են հանձնվել երկու նոր հանրակրթական դպրոց՝ 272 աշակերտական տեղով և ամրացվել է մեկ հանրակրթական դպրոց՝ 192 աշակերտական տեղով,

-*Շիրակի մարզպետարանի* կողմից Ախուրյանի տարածաշրջանում ամրացվել և շահագործման է հանձնվել մեկ հանրակրթական դպրոց՝ 400 աշակերտական տեղով:

◆ **Համաշխարհային բանկի վարկի հաշվին Սոցիալական ներդրումների հիմնադրամի** կողմից շահագործման են հանձնվել 5 նոր հանրակրթական դպրոց՝ 2070 աշակերտական տեղով, մասնավորապես.

- ք. Գյումրիում՝ մեկ հանրակրթական դպրոց՝ 260 աշակերտական տեղով, ք. Վանաձորում՝ մեկ հանրակրթական դպրոց՝ 260 աշակերտական տեղով, Ախուրյանի տարածաշրջանում՝ մեկ հանրակրթական դպրոց 350 աշակերտական տեղով, Արթիկի տարածաշրջանում՝ մեկ հանրակրթական դպրոց 450 աշակերտական տեղով, Մասիսի տարածաշրջանում՝ մեկ հանրակրթական դպրոց 750 աշակերտական տեղով:

◆ **մարդասիրական միջոցների հաշվին** շահագործման են հանձնվել 3 հանրակրթական դպրոց՝ 1240 աշակերտական տեղով, մասնավորապես.

- **«Հայաստան» համահայկական հիմնադրամի** միջոցների հաշվին Լոռու մարզի Օձուն գյուղում ամրացվել և վերակառուցվել է՝ մեկ հանրակրթական դպրոց 420 աշակերտական տեղով,

- **այլ մարդասիրական միջոցների հաշվին** շահագործման է հանձնվել երկու նոր հանրակրթական դպրոց՝ 820 աշակերտական տեղով, դրանից՝ **Սոցիալական ներդրումների հիմնադրամի** Ախուրյանի տարածաշրջանում շահագործման է հանձնվել մեկ նոր հանրակրթական դպրոց՝ 220 աշակերտական տեղով, **Հայաստանի օգնության ֆոնդի** ք. Գյումրիում շահագործման է հանձնվել մեկ նոր հանրակրթական դպրոց՝ 600 աշակերտական տեղով:

Առողջապահական հիմնարկների շինարարություն: Սեփականաշնորհումից ստացված միջոցների հաշվին ք. Վանաձորում ամրացվել է 90 մահճակալով մեկ հիվանդանոց:

Իրականացված կապիտալ շինարարության ծավալը: 2000թ. հունվար-նոյեմբերին հանրապետությունում իրականացվել է 72394,4 մլն. դրամի կապիտալ շինարարություն, այդ թվում արտադրական նշանակության օբյեկտների գծով՝ 35813,4 մլն. դրամի: Իրականացված կապիտալ շինարարության ծավալում շինմոնտաժային աշխատանքները կազմել են 65714,4 մլն. դրամ, որից արտադրական նշանակության օբյեկտների գծով՝ 31892,3 մլն. դրամ:

Հանրապետությունում 2000թ. հունվար-նոյեմբերին իրականացված կապիտալ շինարարությունն ըստ ֆինանսավորման աղբյուրների

Ֆինանսավորման աղբյուրներ	Իրականացված կապիտալ շինարարությունը, մլն. դրամ (փաստացի գներով)	Տոկոսներով	
		Ընդհանուրի նկատմամբ	2000թ. հունվար-նոյեմբերը 1999թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ, համադրելի գներով
Իրականացված կապիտալ շինարարությունը, ընդամենը	72394,4	100	121,0
<i>այդ թվում ի հաշիվ՝</i>			
պետական բյուջեի	5938,2	8,2	56,4
սեփականաշնորհումից ստացված միջոցների	8813,5	12,2	97անգամ և ավելի
պահուստային ֆոնդի միջոցների	14,8	0,0	17,5
համայնքների միջոցների	222,2	0,3	103,5
Ջարգացման և վերակառուցման եվրոպական բանկի վարկի	689,1	1,0	22,8
Համաշխարհային բանկի վարկի	5097,2	7,0	35,6
Համաշխարհային բանկի գրանտի միջոցների	99,9	0,1	2անգամ և ավելի
մարդասիրական օգնության միջոցների	6461,8	8,9	92,6
<i>դրանից՝</i>			
«Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցների	525,4	0,7	137,3
ՄԱԿ-ի միջոցների	538,2	0,7	68,0
Ամերիկյան Կարմիր խաչի միջոցների	996,1	1,4	39,5
Փախստականների հարցերով Նորվեգական խորհրդի միջոցների	439,4	0,6	88,8
Հայ Առաքելական եկեղեցու կողմից հանգանակված միջոցների	2835,6	3,9	6 անգամ և ավելի
այլ մարդասիրական օգնության միջոցների	1127,1	1,6	48,4
օտարերկրյա ներդրողների միջոցների	4957,6	6,9	6 անգամ և ավելի
կազմակերպությունների միջոցների	27764,0	38,4	3 անգամ և ավելի
բնակչությանն միջոցների	12336,1	17,0	75,3

2000թ. հունվար-նոյեմբերին *պետական բյուջեի միջոցների* հաշվին իրականացված կապիտալ շինարարության ծավալը կազմել է 5938,2 մլն.դրամ, այդ թվում արտադրական նշանակության օբյեկտների գծով՝ 4443,7 մլն.դրամ: Շինմոնտաժային աշխատանքների ծավալը, համապատասխանաբար, կազմել է 5182,1 և 3838,3 մլն.դրամ:

Սեփականաշնորհումից ստացված միջոցների հաշվին իրականացված ոչ արտադրական նշանակության օբյեկտների շինարարության ծավալը կազմել է 8813,5 մլն. դրամ, այդ թվում շինմոնտաժային աշխատանքների ծավալը՝ 8299,0 մլն.դրամ:

Պահուստային ֆոնդի հաշվին իրականացված ոչ արտադրական կապիտալ շինարարության ծավալը կազմել է 14,8 մլն.դրամ, այդ թվում շինմոնտաժային աշխատանքների գծով՝ 13,1 մլն.դրամ:

Համայնքների միջոցների հաշվին իրականացվել են 222,2 մլն.դրամի շինարարական աշխատանքներ, այդ թվում արտադրական նշանակության օբյեկտների գծով՝ 13,2 մլն.դրամի:

Զարգացման և վերակառուցման եվրոպական բանկի կողմից տրամադրված վարկի հաշվին արտադրական նշանակության օբյեկտների վրա իրականացվել է 689,1 մլն.դրամի կապիտալ շինարարություն, այդ թվում շինմոնտաժային աշխատանքների ծավալը կազմել է 476,3 մլն.դրամ:

Համաշխարհային բանկի տրամադրած վարկի հաշվին 2000թ. հունվար-նոյեմբերին իրականացվել է 5097,2 մլն.դրամի կապիտալ շինարարություն, այդ թվում արտադրական նշանակության օբյեկտների գծով՝ 4426,7 մլն.դրամ: Շինմոնտաժային աշխատանքների ծավալը, համապատասխանաբար, կազմել է 4353,8 և 3683,3 մլն.դրամ:

Համաշխարհային բանկի կողմից տրամադրած *գրանտի* հաշվին «Զրային հատվածի զարգացման» ծրագրի նախապատրաստական աշխատանքների համար իրականացվել են 99,9 մլն.դրամի կապիտալ ներդրումներ:

Մարդասիրական օգնության միջոցների հաշվին 2000թ. հունվար-նոյեմբերին իրականացվել է 6461,8 մլն.դրամի կապիտալ շինարարություն, այդ թվում արտադրական նշանակության օբյեկտների գծով՝ 375,2 մլն.դրամ: Շինմոնտաժային աշխատանքների ծավալը, համապատասխանաբար, կազմել է 6258,4 և 369,1 մլն.դրամ, դրանից՝

♦ «*Հայաստան*» *համահայկական հիմնադրամի* միջոցների հաշվին ոչ արտադրական նշանակության օբյեկտների շինարարության վրա իրականացվել են 525,4 մլն.դրամի շինարարական աշխատանքներ:

♦ *ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի* միջոցների հաշվին բնակելի շենքերի և սոցիալ-մշակութային նշանակության օբյեկտների շինարարության համար իրականացվել է 538,2 մլն.դրամի կապիտալ շինարարություն, այդ թվում շինմոնտաժային աշխատանքների գծով՝ 537,0 մլն.դրամ:

♦ *Ամերիկյան Կարմիր Խաչի* միջոցների հաշվին իրականացված բնակարանային շինարարության ծավալը կազմել է 996,1 մլն.դրամ, այդ թվում շինմոնտաժային աշխատանքների ծավալը՝ 946,3 մլն.դրամ:

♦ *Փախստականների հարցերով Նորվեգական խորհրդի* միջոցների հաշվին իրականացված կապիտալ շինարարության ծավալը կազմել է 439,4 մլն.դրամ, այդ թվում արտադրական նշանակության օբյեկտների գծով՝ 18,0 մլն.դրամ:

♦ *Հայ Առաքելական եկեղեցու կողմից հանգանակված* միջոցների հաշվին իրականացված կապիտալ շինարարության ծավալը կազմել է 2835,6 մլն.դրամ, այդ թվում շինմոնտաժային աշխատանքների գծով՝ 2693,9 մլն.դրամ:

Օտարերկրյա ներդրողների միջոցների հաշվին իրականացվել է 4957,6 մլն.դրամի ոչ արտադրական կապիտալ շինարարություն, որից շինմոնտաժային աշխատանքների ծավալը կազմել է 3427,3 մլն.դրամ:

Կազմակերպությունների միջոցների հաշվին իրականացվել է 27764,0 մլն.դրամի կապիտալ շինարարություն, այդ թվում արտադրական նշանակության օբյեկտների գծով՝ 24516,2 մլն.դրամ: Շինմոնտաժային աշխատանքների ծավալը, համապատասխանաբար, կազմել է 25527,7 և 22446,7 մլն.դրամ:

Բնակչության միջոցների հաշվին անհատական բնակելի շենքերի, արտադրական և ոչ արտադրական նշանակության օբյեկտների շինարարության վրա իրականացվել է 12336,1 մլն.դրամ, այդ թվում անհատական բնակելի շենքերի գծով՝ 10035,6 մլն.դրամ շինարարական աշխատանքներ, արտադրական և ոչ արտադրական նշանակության օբյեկտների գծով՝ 2300,5 մլն.դրամ:

Շինարարության ծավալները 2000թ. հունվար-նոյեմբերի, ըստ տնտեսության ճյուղերի

(փաստացի գներով, մլն. դրամ)

	Իրականացվել է կապիտալ շինարարություն		Ընդհանուրի նկատմամբ, տոկոսներով	
	Ընդամենը	այդ թվում շինմոնտաժային աշխատանքներ	Ընդամենը	այդ թվում շինմոնտաժային աշխատանքներ
Ընդամենը	72394,4	65714,4	100	100
<i>այդ թվում՝</i>				
Արդյունաբերություն	5614,9	4667,9	7,7	7,1
Գյուղատնտեսություն	5838,1	4627,5	8,1	7,1
Տրանսպորտ և կապ	23264,5	21572,1	32,1	32,8
Առևտուր	1249,4	1065,4	1,7	1,6
Բնակարանային տնտեսություն	16484,4	15890,7	22,8	24,2
Կոմունալ տնտեսություն	8450,6	7424,3	11,7	11,3
Առողջապահություն	346,2	341,0	0,5	0,5
Կրթություն	4251,9	4002,7	5,9	6,1
Մշակույթ	151,6	151,6	0,2	0,2
Տնտեսության այլ ճյուղեր	6742,8	5971,2	9,3	9,1

Վերանորոգման և վերականգնողական աշխատանքներ: 2000թ. հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում վերանորոգվել են 27822 աշակերտական տեղով 51 հանրակրթական դպրոց:

Սոցիալական ներդրումների հիմնադրամի կողմից *Համաշխարհային բանկի վարկի* հաշվին ընդհանուր վերանորոգման են ենթարկվել Թեքեյան մշակութային կենտրոնը և 1740 աշակերտական տեղով մեկ հանրակրթական դպրոց ք.Երևանում:

Փախստականների հարցերով Նորվեգական խորհրդի միջոցների հաշվին վերանորոգվել են 2317 աշակերտական տեղով 6 հանրակրթական դպրոց, այդ թվում՝ Նորամարգ գյուղում՝ 330 աշակերտական տեղով մեկ հանրակրթական դպրոց, Հայանիստ գյուղում՝ 386 աշակերտական տեղով մեկ հանրակրթական դպրոց, Ջերմուկի թիվ 2 հանրակրթական դպրոց 907 աշակերտական տեղով և ճամբարակ գյուղի 694 աշակերտական տեղով 3 հանրակրթական դպրոց:

Արմավիրի մարզպետարանի կողմից *սեփականաշնորհումից ստացված միջոցների* հաշվին վերանորոգվել է 3504 աշակերտական տեղով 6 հանրակրթական դպրոց:

Գեղարքունիքի մարզպետարանի կողմից *սեփականաշնորհումից ստացված միջոցների* հաշվին վերանորոգվել են 12411 աշակերտական տեղով 23 հանրակրթական դպրոց, այդ թվում. *սեփականաշնորհումից ստացված միջոցների* հաշվին՝ 5988

աշակերտական տեղով 6 հանրակրթական դպրոց և մարդասիրական օգնության միջոցների հաշվին՝ 6423 աշակերտական տեղով 17 հանրակրթական դպրոց:

Կոտայքի մարզպետարանի կողմից սեփականաշնորհումից ստացված միջոցների հաշվին վերանորոգվել է 1600 աշակերտական տեղով մեկ հանրակրթական դպրոց:

Վայոց Ձորի մարզպետարանի կողմից վերանորոգվել են 4370 աշակերտական տեղով 7 հանրակրթական դպրոց, այդ թվում. սեփականաշնորհումից ստացված միջոցների հաշվին՝ 2220 աշակերտական տեղով 3 հանրակրթական դպրոց և մարդասիրական օգնության միջոցների հաշվին՝ 2150 աշակերտական տեղով 4 հանրակրթական դպրոց:

Տավուշի մարզպետարանի կողմից սեփականաշնորհումից ստացված միջոցների հաշվին վերանորոգվել է 1880 աշակերտական տեղով 7 հանրակրթական դպրոց:

Շինարարությունն աղետի գոտում

Բնակարանային շինարարություն: 2000թ. հունվար-նոյեմբերին երկրաշարժից տուժած քաղաքներում և գյուղական վայրերում բնակչության, սեփականաշնորհումից ստացված միջոցների և մարդասիրական օգնության միջոցների հաշվին շահագործման են հանձնվել 24739 քառ.մ ընդհանուր (օգտակար) մակերեսով 43 նոր բնակելի շենքեր կամ հանրապետությունում գործարկված մակերեսի 22,9 տոկոսը:

Հանրակրթական դպրոցների շինարարություն: 2000թ. հունվար-նոյեմբերին շահագործման են հանձնվել 4752 աշակերտական տեղով 15 հանրակրթական դպրոց, որոնցից.

♦ **սեփականաշնորհումից ստացված միջոցների հաշվին** շահագործման են հանձնվել 8 հանրակրթական դպրոց՝ 2192 աշակերտական տեղով, մասնավորապես.

- *Լոռու մարզպետարանի* կողմից շահագործման են հանձնվել 7 հանրակրթական դպրոց՝ 1792 աշակերտական տեղով, դրանից՝ ք.Վանաձորում՝ տեխնիկումը վերափոխվել է հանրակրթական դպրոցի՝ 360 աշակերտական տեղով, ամրացվել է մեկ հանրակրթական դպրոց՝ 392 աշակերտական տեղով, շահագործման է հանձնվել նոր մեկ հանրակրթական դպրոց՝ 384 աշակերտական տեղով, Գուգարքի տարածաշրջանում՝ շահագործման է հանձնվել մեկ նոր հանրակրթական դպրոց՝ 192 աշակերտական տեղով, ք.Ստեփանավանում՝ շահագործման են հանձնվել երկու նոր հանրակրթական դպրոց՝ 272 աշակերտական տեղով և ամրացվել է մեկ հանրակրթական դպրոց՝ 192 աշակերտական տեղով,

- *Շիրակի մարզպետարանի* կողմից Ախուրյանի տարածաշրջանում ամրացվել և շահագործման է հանձնվել մեկ հանրակրթական դպրոց՝ 400 աշակերտական տեղով:

♦ **Համաշխարհային բանկի վարկի հաշվին Սոցիալական ներդրումների հիմնադրամի** կողմից շահագործման են հանձնվել 4 նոր հանրակրթական դպրոց՝ 1320 աշակերտական տեղով, մասնավորապես.

- ք. Գյումրիում՝ մեկ հանրակրթական դպրոց՝ 260 աշակերտական տեղով, ք.Վանաձորում՝ մեկ հանրակրթական դպրոց՝ 260 աշակերտական տեղով, Ախուրյանի տարածաշրջանում՝ մեկ հանրակրթական դպրոց՝ 350 աշակերտական տեղով, Արթիկի տարածաշրջանում՝ մեկ հանրակրթական դպրոց՝ 450 աշակերտական տեղով:

♦ **մարդասիրական միջոցների հաշվին** շահագործման են հանձնվել 3 հանրակրթական դպրոց՝ 1240 աշակերտական տեղով, մասնավորապես.

- **«Հայաստան» համահայկական հիմնադրամի** միջոցների հաշվին Լոռու մարզի Օձուն գյուղում ամրացվել և վերակառուցվել է՝ մեկ հանրակրթական դպրոց՝ 420 աշակերտական տեղով,

- **այլ մարդասիրական միջոցների հաշվին** շահագործման է հանձնվել երկու նոր հանրակրթական դպրոց՝ 820 աշակերտական տեղով, դրանից՝ **Սոցիալական ներդրումների հիմնադրամի** Ախուրյանի տարածաշրջանում շահագործման է

հանձնվել մեկ նոր հանրակրթական դպրոց՝ 220 աշակերտական տեղով, *Հայաստանի օգնության ֆոնդի* ք.Գյումրիում շահագործման է հանձնվել մեկ նոր հանրակրթական դպրոց՝ 600 աշակերտական տեղով:

Առողջապահական հիմնարկների շինարարություն: Սեփականաշնորհումից ստացված միջոցների հաշվին ք. Վանաձորում ամրացվել է 90 մահճակալով մեկ հիվանդանոց:

Իրականացված կապիտալ շինարարության ծավալը: Հանրապետության աղետի գոտում 2000թ. հունվար-նոյեմբերին բնակելի շենքերի, սոցիալական և արտադրական նշանակության օբյեկտների շինարարության, վերականգնման և վերանորոգման վրա ֆինանսավորման բոլոր աղբյուրների հաշվին իրականացվել է 13131,0 մլն. դրամի կապիտալ շինարարություն կամ հանրապետությունում կատարված շինարարության ընդհանուր ծավալի 18,1 տոկոսը, այդ թվում արտադրական նշանակության օբյեկտների շինարարության գծով՝ 2360,2 մլն. դրամ (6,6տոկոս):

2000թ. հունվար-նոյեմբերին հանրապետության աղետի գոտում իրականացված կապիտալ շինարարությունն ըստ ֆինանսավորման աղբյուրների

	Իրականացվել է կապիտալ շինարարություն		Ընդհանուրի նկատմամբ, տոկոսներով	
	Ընդամենը	<i>այդ թվում՝</i> շինմոնտաժային աշխատանքներ	Կապիտալ շինարարություն	<i>այդ թվում՝</i> շինմոնտաժային աշխատանքներ
Ընդամենը	13131,0	12168,3	100	100
<i>այդ թվում՝ հ հաշիվ՝</i>				
Սեփականաշնորհումից ստացված միջոցների	6805,9	6313,7	51,8	51,9
համայնքերի միջոցների	21,7	21,7	0,2	0,2
Համաշխարհային բանկի վարկի	323,8	323,6	2,4	2,6
մարդասիրական օգնության միջոցների	2139,0	2077,9	16,3	17,1
<i>դրանից՝</i>				
«Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցների	499,2	499,2	3,8	4,1
ՄԱԿ-ի միջոցների	57,5	56,3	0,4	0,5
Ամերիկյան Կարմիր խաչի միջոցների	996,1	946,3	7,6	7,8
Փախստականների հարցերով Նորվեգական խորհրդի միջոցների	55,1	55,1	0,4	0,4
Հայ Առաքելական եկեղեցու կողմից հանգանակված միջոցների	202,4	192,3	1,6	1,6
այլ մարդասիրական օգնության միջոցների	328,7	328,7	2,5	2,7
օտարերկրյա ներդրողների միջոցների	1033,8	684,1	7,9	5,6
կազմակերպությունների միջոցների	2046,7	2008,4	15,6	16,5
բնակչության միջոցների	760,1	738,9	5,8	6,1